

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Ինչք եւ չե՞ն
արտիք:Հասցե
DIRAN PAPAZIANRUE DRAGOMAN
K. STEPAN
BULGARIE) VARNA

ՀԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Յրէ կ'ուզե՛ք «Հայելի»ին մէջ աղոյս երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳ.

Քաղաքիս Ազգ. երկսեռ վարժարաննե-
րը եւ մանկապարտէզը, 1 սեպտեմբեր, չո-
րեքշաբթի ուր կը վերաբացուին:

Ուստի ծնողքներ եւ պաշտպաններ կը
հրաւիրուին ամէն առաւօտ ժամ 9-12 խոր-
հրդարանը անձամբ ներկայանալով աշակերտ-
ներու ընդունելութեան պայմաններուն վրայ
բանակցիլ եւ ստանալ մտից արտօնագիրը:

Վառնա 24 Օգոստոս 1899

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ. երկսեռ
վարժարանաց

Ատենագիր

Ատենապետ

Գ. Կիւլպէսէրեան

Յ. Մ. Թովմասեան

Թիֆլիզէ կը գրեն թէ, Լուի գա-
ւառի մէջ Մարց գիւղի հողատիրութեան
խնդիրը որ էջմիածնի եւ Ռուս կառա-
վարութեան միջև դատի տակ էր, այս
օրերս վերջացեր է, որով էջմիածին իր
ձեռքը կանցունէ 7—8000 դեսետային
ընդարձակութեամբ գետին մը, գիւղե-
րով ու անտառներով միասին:

— Վեհ. Հայրապետը Կոնդակով մը
հրամայած է նոր նախիջևանի հոգևոր
դպրոցի տեսչութեան, որպէս զի օտա-

րահպատակ անձինք չկարենան պաշտօ-
նավարել ազգ. հաստատութեանց մէջ:

— Էրզրումէն կը գրեն թէ, Սանա-
սարեան վարժարանի սաներուն կօշիկ-
ները տեղւոյն Կարմիր Վանքի Որբա-
նոցի արհեստանոցին մէջ կարել կը
արուին, այդ հաստատութիւնը քաջա-
լերելու նպատակաւ:

— Աղեքսանդրիոյ մէջ ժողովրդական
ընթերցարան մը հաստատուեր է, նը-
պատակ ունենալով ի մասնաւորի աղքատ
դասակարգին ընթերցասիրութեան փա-
փագին դոհացում տալ:

— Դաւթէժէն կը հեռագրեն թէ
Ազգ. Հիւանդանոցի վաղեմի արդիւնա-
ւոր հոգաբարձուներէն Տ. Յովակիմ
Ֆէնէրճեան, որ բաւական տարիներէ ի
վեր Պարսկաստան փոխադրուած էր, ուր
կը շարունակէր իր վաճառանական
գործառնութիւնները, ամսոյս 16 եր-
կուշաբթի օրը մեռեր է:

— Յառաջիկայ Սեպտ. 1ին Պոլսոյ մէջ
պիտի սկսի հրատարակուիլ «Ծաղիկ» օ-
րաթերթը, որ «Սուրհանդակ»էն քիչ
մը աւելի մեծ ծաւալ պիտի ունենայ եւ
պիտի ծախուի հաւոր 10 փարայի: Հրա-
տարակիչն է «Հանրագիտակ»ի խմբա-
գիր Դ. Բոլատ:

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ տեղւոյ վարժարանաց Հոգաբարձութիւնը այս անգամ կարող և բանիրուն ոչկուսակցամիւ տարրերէ բաղկացեալ ուսուցչական մարմին մը կազմած է, նախորդ տարիներէ աւելի ճոխ ծրագրով մը վարժարանք պիտի վերաբացուին յառաջիկայ սեպտ. 1 չորեքշաբթի օրը:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ

ԱԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ՉԵՐԸ

Ռուսիոյ գահաժառանգ Եօրկէյ իշխանին մահուան անթիւ Ս. Հայրապետին կողմէ շարին ուղղուած ցաւակցական հեռագրին, ինչպէս նաև Նիքոլա Բ. կայսեր հեռագրական պատասխանին հայերէն թարգմանութիւնները հրատարակուած են Էջմիածնայ ամսաթերթին մէջ:

Ահաւասիկ Ս. Հայրապետին հեռագիրը.

«Թագաժառանգ Գէորգիյի մահուան խիստ «վշտալի գոյժը յանչափս տխրեցրեց ինձ եւ «ամբողջ Հայոց եկեղեցին: Խոնարհելով Աստուծոյ առաջ, զառնապէս ողբում եմք «հարիւր միլիոնաւոր հաւատարիմ հպատակ-աների հետ այդ մեծագոյն կորուստի և, Մի-«առնի սկզբնի առաջ հոգեհանգիստ կատա-«րելով՝ ամենաջրմեղանդն աղօթքներ եմք «վեր առաքում» տալ Ձերդ Մեծութեան Ս. «Հոգւոյ մխիթարութիւնը, թեթեւացնելով Ձեր «մեծ վիշտը: Եւ թող Ամենողորմածն Աս-«տուած հանգուցանէ Գէորգիյ Թագաժառ-«անգի հոգին, յաւիտենական կեանք պար-«գենելով երկնից արքայութեան մէջ:»

Ահաւասիկ Նիքոլա Բ. կայսեր հեռագրական պատասխանը.

«Խորապէս զգածուած եմ Ձերդ Սրբու-«թեան ջերմագին աղօթքներէն՝ վաղաժամ «վախճանուած Թագաժառանգի հոգւոյ հան-«գուցման համար: Ի սրտէ շնորհակալ եմ «Ձեզնից և բոլոր Հայոց եկեղեցւոյ՝ արտա-«յայտած վշտակցական զգացմանց համար:

Ռուսիոյ մայր-կայսրուհին եւս հետեւեալ հեռագրով պատասխանած է Ս. Հայրապետին ցաւակցական հեռագրին.

«Խորապէս զգածուած եմ Ձեր կարեկ-«ցութեամբ և աղօթքներով. անկեղծօրէն շը-«նորհակալ եմ:»

Հաճրնի հրդեհը

Յաւալի լուր մը կը հասնէ: Հաճրնէն: Տեղւոյն աւաղերէցը հեռագրած է ի Պատրիարքարան թէ, անցեալ չորեքշաբթի օգոստ. 18 թւը Սրբ. Թաղի մէջ հրդեհ ծագելով, քանի մը թեւի բաժնուեր և մեծ ֆնտաներ պատճառուեր է: 200ի չափ տուններ միտիր պարձած և հաշարի չափ հայեր անպատասպար մնացած են:

Նպաստից յանձնաժողովը որոշեց անմիջապէս 100 տկիի գումար մը զըրկել կիլիկիոյ կաթողիկոսական Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոսին, խնդրելով որ ինքը անձամբ տանի բաշխէ այդ նըպաստը հրկիզեալներուն: Ներքին գործոց նախարարութեան ալ քաղաք մը գրուելով, անպատասպար հրկիզելոց համար օգնութիւն և նպաստ խնդրուեցաւ:

— Երուսաղէմի լուսարարապետ Տ. Սահակ եպիս. Խապանան 10 ֆրանս. ոսկի նպաստ շնկած է իր ծննդավայրին՝ Խարբերդի Խուլէվանքի օրբանոցին:

— Մագրիկիւղի եկեղեցիէն գողցուած նիւթերը գտնուեր են: Տղայ մը պարապ գետնի մը մէջ խաղացած միջոցին, հողին մէջ պահուած բաներ տեսնելով իմաց տուեր և այդ տեղը փորուելով մեր եկեղեցիէն գողցուած նիւթերը երևան հանուեր են:

— Պաքուէն կը գրեն թէ, փողոցի մը կեդրոնէն գտնուեր է գարնջուրի արկղ մը, որուն մէջ 17 տարեկան հայ դորժաւորի մը մարմինը ամուր սեղմուած էր: Վերջին շաբթուն բաւականին սպաննութիւններ տեղի ունեցեր է նոյն քաղաքին մէջ:

«ՓԱՅԼԱԿ»ԻՆ ԵՐԱԶԸ

Յարգելի Պ. Բոժոժիկ,

Այս գիշեր երազ մը տեսայ ու ինքզինքս հայաշատ շիֆ քաղաք մը փոխադրուած գտայ. (պէտք է խոստովանիմ թէ ցարդ Վառնաէն ուրիշ քաղաք մը տեսած չէի) ու որքան զարմացայ, երբ ինքզինքս գետնափոր

չէնքի մը առջև գտայ, որուն վրայ տեսնուած զանգակատունը ինձ զգացնել տուաւ թէ Եկեղեցիի մը առջև կը գտնուիմ, և որուն զոնորը ու պատուհանները գրեթէ հողուն մէջն են: Հոն գերեզմանաքարեր ալ կային, երկայնքին ու լայնքին դուռած, որոնց վրայի գրերը հայերէն ըլլալու երեւոյթը ունէին. բան մը որ զիս շատ ուրախացուց և դէպի այդ գետնափոր շէնքը յառաջանալու համար ձակուածիւնը ներշնչեց ինձ. մօտեցայ և երգեցողութեան ձայներ լսեցի, ինքզինքս չընօրմի փաթազումներուն մօտիկը կարծեցի ու վայրկեան մը սարսափով դէպի դուռը յառաջացայ, դուռս ելլելու փորձ մը ըրի, բայց փոխանակ հեռանալ կարենալու, անձանթ զօրութիւն մը զիս եկեղեցիին մէջտեղը նետեց. շրջապատուած էի ջերմեռանդներու խուռն բազմութենէ մը: Ինձ այնպէս կը թուէր թէ հանդիսաւոր օր մըն էր, նկատելով եկեղեցիին բազմութիւնը և արտակարգ լուսավառութիւնը. մանաւանդ *Արիման*ի գլխարկաւոր ճէնթը մէջներու եւ փոքր լեռներու արաւի կերպարանքն ունեցող ջոջերու ներկայութիւնը, որոնք առանց բացառութեան կ'աղօթէին ջերմեռանդաբար: Վայրկեան մը ես ալ մօտեցաւ իմ անասունածի հովերս, սկսայ երեսու խաչակներէ ու «սուրբ Աստուած» կըմկմալ բթիս առկէն: Այն, շատ մեծ էր այդ ժամուն իմ վրայ ձգած տպաւորութիւնը, ու որքան անշնորհք կը գտնէի ինքզինքս, այդ գեղազգեստ պարոններու ու ծերունիներու միջեւ. վրաս կը նայէի ու զգեստս տփփոյն կը տեսնէի, ամօթահար էի եւ կասկարմիր կըտորած էի ճիշդ եփուած խնչափառի մը պէս. կուզէի ձգել դուռս ելլել, բայց ոտքերս գամուած էին, արձանացած էի, միայն ձեռքս կը շարժէր. . . խաչ հանելու համար: Կրտսէն թէ պարագաները կողքին սրտին վրայ ու սիրտըն ալ ըղնղին վրայ, ու այդպէսով մարդ բարի կամ չար, կրօնասէր կամ անկրօն կը դառնայ, ինչպէս ես ալ կրօնասէր մը դարձած էի վայրկեանի մը մէջ, երազիս մէջ: ՔՏ, որքան կափոսայի այդ քաղաքը ծնած ըլլալուս, կանխէի բազդս որ Վառնայի պէս չ'որ տեղ մը ծնած ու մեծցուցած էր զիս, որով զրկուած էի ճէնթմէնի մը երեւոյթներէն ու ապագայ ջոջ աղա մը ըլլալու հաւանականութենէն. հապա այն *Դաւաթան* խմբակը, ապագայ աղացուններ, որոնք ահա թարթի մէջ կը կատարէին աղայի մը կողմէ

տրուած մէն մի հրաման, իմ արմանքս զարմանքս կը շարժէին: Հիտակը, դիտելու տեսարան մըն էր, տեսարան մը, որուն գաղափարն իսկ չունի խեղճ Վառնայի երիտասարդութիւնը: Ու կը մտածէի թողուլ սա Վառնան եւ վերջնականապէս հաստատուիլ այս ազնուական քաղաքին մէջ ու ապրիլ վստեմաշուքներու հովանիին տակ, գոնէ քիչ մը մարդանալու, քիչ մը ազնուանալու համար. բայց յանկարծ խոշոր շվաց մը, կոկորդալիս ձայներ արձագանք տուին եկեղեցիին մէջ ու շփոթութեան մատնեցին ամեն ինչ: Վայրկեանապէս դադրած էր արարողութիւնը ու անոր յաջորդած էր տակնուվրայութիւնը: Ոմանք ներս մտնելու, իսկ ոմանք դուռս ելլելու փորձեր կընէին, կարծես երկրաշարժը սկսած էր եւ կամարը մեր գլխուն վրայ պիտի փլէր. տէր պապաները իրար անցած ու սորկաւորին զլուխը վար իսկ ոտքերը վեր տնկուած կեցած էր: Գոնէ ես այնպէս կը կարծէի թէ ալ կորսուած ենք ու կողբայի Վառնայի պէս քաղաք մը ձգած ըլլալուս համար, որուն եկեղեցիին մէջ ասանկ աղմուկ չէին հանած, արարողութիւնը չէին խափանած ու սարկաւորին ոտքերը դէպի վեր չէին տնկած: Կուզէի, կը փափաքէի մեկնիլ բայց անկարելի էր, ոտականներով պաշարուած էիք, չեմ դիտեր մեր ո՞ր շգործած յանցանքին համար: Ի՞նչ էր ինքիւրը, չէի հասկնար. միայն կը լսէի «յիշուի» «չյիշուի»ներու անընդհատ գոռում. գոռումը: Արդեօք *Այս ցնչիմ* *Անուկն* էր այդ սոսկալի պայքարին նախապատճառը, այդ եղբայրադաւ իրարանցումին շարժառիթը. ի՞նչ գաղտնիկ կը պարունակէր այդ «յիշուին» «չյիշուին», որ այդքան կիրքերը գրգռած, եղբայր եւրօր դէմ զինած, ընկերն ընկերով դէմ հանած ու ոտականական միջամտութեան տեղի տուած էր: Կուզէի պոռալ, բայց ձայնս չէր ելլեր. կաշխատէի փախչիլ, բայց պաշարուած էի. . . : Հոգիս տալու մօտ էի. կը յիշէի Վառնայի խաղաղ մթնոլորտը ու կեանքը, հոն այսպիսի ուղտոտ խնդիրներու անտեսական ըլլալը: Վերջապէս, ուժս ամփոփելով երբ դուրս նետուիլ ուզեցի, ահա աչքերս լացուեցան, տեսայ որ Վառնա իմ անկողնիս մէջ եմ, արիւն քրտինք մտածու փառք տուի երկնից՝ այսքան աժան ապատած ըլլալուս համար:

ՓԵՅԼԸԿ

ՆԱԻԱՐԺԱԻ

Աստուածածնայ կիրակի օրը Պոլսոյ մեծ կղզիին առջև մեծ նաւարշաւ մը տեղի ունեցած է. այս նաւարշաւի մրցումին մասնակցած է նաև գեղեցիկ սեւը, որոյ մասին Արեւելոյի մէջ տեսնուած հասուածը հոս կ'արտասուպենք.

«Նաւարշաւին ամենէն սիրուն մրցումը պիտի սկսի: Ամաթէօս կիներու և օրիորդներու երկգուգաթի վեց մակոյկ շարուած են որոշ գիծի մը վրայ և աղջիկներ՝ մասամբ ձերմակ ու կապոյտ հագուած, էրկիմարգու կատարեալ դիրքով մը պատրաստ կեցած են, թիերը ձեռքերնին:

Հետաքրքրութիւնը ընդհանուր է. անհամբերութեան արտայայտութիւն մը կը տեսնուի ամենուն վրայ և ի զուր կը սպասեն հրացանի հարուածին՝ որ մեկնումի նշանը պիտի տայ:

— Ինչո՞ւ չեն մեկնիր, կը հարցնէ ծերուկ կին մը՝ որ, — տարօրինակ բան, — իր քթան մագերուն հակառակ վերջին ծայր կը շահագորգուի նաւարշաւին:

— Վերջապէ՛ս, կը գոռայ ձայն մը:

Հրացանը դէպ ի վեր բռնուած է արդէն. ակնթարթ մը շանցած, հարուածը կը մեկնի:

Եւ յանկարծ, մօտաւորապէս հարիւրի յանգող շոգենաւերու, շոգեմակոյկներու սուղիները գրեթէ միևնոյն ատեն սուղել կը ըսկսին. աննկարագրելի, անորակելի ժլոր մը՝ որ չի հատնիր բնաւ, և քանի՜ թիափարող օրիորդները նոր ճիգ մը կ'ընեն իրար գլելու, ա՛լ աւելի սաստիկ թափ մը կը ստանայ այդ խլացուցիչ աղմուկը որ ամէն ձայն կը խեղդէ:

Չե՞սք չէ մնացած որ չծափահարէ:

Ամէն մարդ աղջիկներուն վրայ կը խօսի, վիճաբանութիւններ տեղի կունենան հաւանական յաղթողին վրայ, ու վերջապէս հանգարտութիւնը կը տիրէ քիչ մը ատեն, բայտսելով մակոյկներու վերադարձին՝ որ շատ չպիտի ուշանայ: Մրցման միջոցը մէկ մղոն է:

Կ'անցնի քառօրդ մը, ու բոլոր շոգենաւերը նորէն սուղել կը սկսին:

Հեռուն՝ ծովին մէկ որոշ կէտին վրայ անհամար մակոյկներ, շոգեմակոյկներ ու նաւակներ՝ սեփ սև գիծ մըն են կազմած՝ ուր

կիներու գունագեղ հագուստներն ու ծաղկաւից գլխարկները կը վառվաին արևին տակ՝ որ իր բովանդակ զարգացման հասած է:

Թեթև հով մը տկար արծազանքը կը բերէ աւելի վարերը որոտացող ծափերու, և ընդհանուր ոգևորութեան մը մէջ՝ ուր ամէն մարդ դէպ ի աւաջ կը խուժէ. յաղթական մակոյկը առաջ կ'անցնի:

Մօլթ կապոյտով հագուած երկու աղջիկներ կը յստակուին նախ՝ աւելի շուտ դէպի մեկնակէտը հասնելու ճիգով մը՝ յետոյ ձերմակ հագուած մարդ մը՝ որ զիրենք կը քաջալերէ:

— Հուռա՛ւ՝ կը պոսան մէկ դիէն, ու նորէն ձեռքերը կ'ելեւելնեն շարունակ, ծափելով անդադար, ծափելով անընդհատ:

Վայրկեան մը նոյն իսկ, այն պահուն ուր հրացանի հարուած մը յաղթական մակոյկին գալուստը կը ծանուցանէ, ծափերու շաշիւնը կը խեղդէ կամ, — ինչ որ աւելի ճիշդ պիտի ըլլար, — կը մուցնէ սուղիներուն ժրխորը:

Մակոյկը առջևնիս է:

Արևէն պաշտպանուելու համար խոշոր, կակուղ գլխարկներ դրած գլուխներն, յաղթական օրիորդները եղնորդի ոստումով մը կը ցատկեն առժամանակեայ նաւամատոյցին վրայ, որ կարգադիր մասնախումբին տաղաւարը կը տանի:

Ճիգը՝ որ ըրած են մրցման պահուն, նուազ կարմիրը դրոշմը է երեսնուն վրայ. աչքերնին կը վառի յաղթողի ուրախութեամբ, ու թեթևօրէն կ'անցնին առաջ, սրբելով մաքուր քրտինք մը՝ որ քունքերնէն վար կը սահի:

Յոգնած չեն. իրենց յատկացուած նւէրը ստանալէ ետքը՝ երբ կը վերադառնան մակոյկ, հովի պէս արագ կը յառաջանան, երեքնելով կապոյտ պզտիկ դրօշ մը՝ որ առաջին մրցանակ շահողներուն կը տրուի:

Ու կը հեռանան ծափահարութիւններու մէջտեղ:

Յետոյ երկրորդ համառ օրիորդներն են որ կը մօտենան, ձերմակ շրջադեհոտներ հագած, խնդում իրենք ալ, ու մանաւանդ ուրիշ:

Ա. մրցանակը՝ մեծարժէք ապարանջան մը և մէտալիոն մը՝ շահեցան օր. Թէրէզ ու Էտմէ Ճիւսթինիանի. Բ.՝ ապարանջան մը և արծաթէ փոքրագիր մակոյկ մը՝ շահեցան օր. Մարի ու Քամիլ Քասթելլիո:

ԴԻՏՈՂԻ ՄԸ ԽՈՀՆԵՐԸ

Հարստանալու կամ հանգիստ կեանք մը անցունելու համար պէտք է խըղճմտանքը մէկ կողմ դնել ու ժողովուրդին տկար կողմը շահագործել:

Աղգասէր ճանչցուելու համար անիրաւութեան և առաւիախաւութեան աւազանին մէջ մկրտուած ըլլալու է:

Մատնիչները կը շատնան այն ատեն՝ երբ ներքին կերպով բռնութիւն մը կաշեկնայ:

Ճշմարիտ հայրենասէրները վշտանալով կը քաշուին հրապարակէն՝ այն ատեն՝ երբ իրենց վրայ անիրաւութիւն և ճնշում ի գործ կը դրուին:

Կարգ մը պատառաբոյժ բախտախնդիրներու սպառնալիքէն ու հայհոյանքէն ազատ մնալու համար՝ պէտք է անոնց պաշտպան գործիչներու ազդեցութեամբ արարքները չի քննադատել:

«Քրտամբ երեսաց կերիցես զհաց քո»ն պէտք է սրբագրել ու ըսել, «Կըրնակ ծեծելով կերիցես զհաց քո»:

Ո՛ւսթր

Զ. Մ.

ԾԻՆԾՈՒ ՊԻՍԱԿ (Պէնկ)

Բարիքի դաւեշտական հանդէսներէն մին, կանանց իբրև դարդ դեմքերնուն վրայ շինած պիսակներու նշանակութիւնը ութի կը բաժնէ, այսպէս.

1. Տարիու հին զայն կը շինէ աչքին անկիւնը.

2. Փառասիրուհին, գրեթէ ճակտին մէջ տեղը.

3. Զուարճախօս կինը, ծիծաղած ատեն այտին վրայ երեցող խոռոչին եզերացը վրայ:

4. Խառնակեաց կինը, այտին մէջ տեղը.

5. Քծնող կինը, շրթանցը վրայ:

6. Պարկեշտ կինը, կղակին վրայ.

7. Ծաղրածու կինը, քթին վրայ.

8. Գող կինը, ճարմանդ (Զիւլիւլ)ին վրայ:

Արդ, տիկնայք եւ օրիորդք, կը յարէ նոյն հանդէսը, եթէ օր մը շինծու պիսակներու գործածութիւնն ընդհանրացնէք, կամ ձեր հասկցած լեզուիւն ըսենք, եթէ անոնց մօտան հանէք, այժմէն սովորած եղիք այս 8ը ձեւերուն նշանակութիւնը և ըստ այնմ վարուեցէք, յորմէ դիւրաւ պիտի հասկցուի իւրաքանչիւրիդ ինչ ճաշակի տէր ըլլալը:

* *

Նոյն հանդէսին մէջ կը կարգանք նաեւ հետեւեալը.

Աւստրալիոյ մէջ բժիշկ մը յաճախորդ վաստկելու համար լրագրաց միջոցաւ հետեւեալ աղբը հրատարակած է.

«Եթէ իմ խնամօքս յանձնուելիք հիւանդները չի յաջողիմ առողջացնել, կը խոստանամ՝ անոնց յուղարկաւորութեան ծախուց կէսը հատուցանել»:

(Մեր Բարիքի լրագրաց միջոցաւ ամեն օր յաճախորդ փնտուող կարգ մը մասնագէտ տօթօններն ալ եթէ այս օրինակ աղբ մը հրատարակեն, վստահութեամբ կըսենք թէ յաճախորդաց բազմութենէն գլուխնին բերելու ժամանակ չեն ունենար):

Ծ Ի Ծ Ա Ղ

Տան մը մէջ.

Ո՛հ, այս ի՞նչ անտանելի բան է, նոր գորսէս ալ անյայտացեր է. տարակոյս չունիմ որ տան տիրոջ կինը գողցած է. կըսէր անցեալ իրիկուն տիկին մը իր ամուսնոյն.

— Զեմ կարծեր որ ատանկ բնաւորութիւն մը ունենայ տիկին Մարթա:

— Ես լաւ հաճողուած եմ որ ինքըն է, ասկէց զատ, ճերմակեղէններէս մէկ քանին ան կը գործածէ կոր.

— Կեցի՛ր. գործէդ ինչ տեսակ գործս է, նկարագրէ տեսնեմ.

— * * * Խանութէն առած եմ, ֆէնարը կարմիր մետաքսով բանուած բարակ ջուրք մը ունի:

— Անանկ է նէ, այս գիշեր հանուած ատենը առանց իրեն նշմարել տալու կը դիտեմ, եթէ հագած գօրսէն քունկարադրածիդ պէս է՝ գողութիւնը երևան կելնէ. ըսելով երբ կնոջը երեսը նայեցաւ, անմիջապէս հասկցաւ սխալ քայլ մը առած ըլլալը, բայց շատ ուշ:

Դերձակ մը իր աշակերտին.

— Մկրտիչ, 20 ֆրանքը ուզելու համար սա պարոն Մ. . . ին գացի՞ր.

— Գացի.

— Ինչ ըսաւ.

— Ստակ չաւնիմ ըսաւ.

— Քանի մը խօսք չըրի՞ր անամութիւն.

— Ինչպէս չըրի, առանց ստակ առնելու ո՞ր կ'ուզես որ երթամ ըսի.

— Էյ ինչ ըսաւ.

— Ո՞ր աւանակին քով կուզես նէ՝ հոն գնա՛ ըսաւ. . . Ես ալ ձեր քովը եկայ:

Դատարանի մէջ.

Դատաւորը—Պարոն, ինչո՞ւ պարտքը չես վճարեր.

Պարտականը—Տէր իմ, թող ինծի պայմանաժամ տայ որ ունեցածս ծախեմ ու պարտքս հատուցանեմ:

Պարտապահանջը—Սուտ կը խօսի տէր դատաւոր, ծախելիք բան մը չունի.

Պարտականը—Կը լսէ՞ք տէր իմ, ինքը կը վկայէ թէ սնանկացեալ եմ ու

բան մը չունիմ, ալ ինչո՞ւ օձիքէս բռնեմ է:

Այս պատասխանին վրայ դատաւորը կը ծիծաղի ու զայն ազատ կ'արձակէ:

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ. . .



(Շարունակութիւն)

— Ներեցէք Պ. Բոժոժիկ, ունեցած ծանրութիւններս նախապէս ըսելէ ետքը, կարծեմ թէ ալ հարկ չի մնար գանթարի զարնորելու:

— Այլէկ ամա, այդ ծանրութիւններու քանի՛ քիւօ ըլլալը պէտք է հասկնանք. այդ ալ խանթարին գործն է. հրամմեցէք:

— Ես իմ համայնագիտութեամբս կըսեմ թէ 120 քիւօ կը կշռեմ:

— Անգամ մը փորձենք. եթէ ըսածնիդ հաստատուի, պաւլօ պիտի ըսեմ ձեզի. եկէք նստեցէք. . . (կշռելով) հարիւր քսանը հինգ. . . տեսա՞ք սիւրելիս, հինգ քիւօ աւելի քաշեցիք: Հիմա ասոր համար ինչ պիտի ըսէք:

— Այդ հինգ քիւօն ալ մեր երաժշտապետին հետ մերթ ընդ մերթ ունեցած բանակաւորներուս քառան կը սեպենք:

— Շատ ալէկ, ուրեմն ճնոցը ցընծալով կընաք մեկնիլ:

— Ցտեսութիւն:

— Տէր ընդ ձեզ: Է՛ ճանրմ, կէլ գանթարա, կէլ գանթա. . .

— Օ՛, բարի առաքեցաք Տիար Բոժոժիկ.

— Գալուստ ձեր բարի եղիցի Տիար երաժիշտ: Հրամմեցէք:

— Ամէնէն առաջ սա քիւթիւնդ տուր որ սիկար մը չինեմ.

- Հէ՞ . . .
- Ծխատուիդ տուր կըսեմ .
- Ես ծխախոտ չեմ գործածեր :
- Ես ալ ծխախոտ չեմ առներ :
- Լաւ . ապա ուրեմն . . .
- Բայց պայմանաւ ոչ բոլորեկամաց ծխատուներուն խաթրը հարցնեմ :
- Կարծեմ թէ ատոր ձրիաճարակութիւն կըսեն :
- Ինչ կուզեն ըսեն , քանի որ դուք չէք գործածեր , մնաք բարով :
- Կեցիր , ո՞ր կերթաս .
- Ծխախոտ ունեցող բարեկամ մը դռնելու :
- Ծխելը ետքի թող , հիմա սա գանթարին վրայ նստէ որ կշռուիս :
- Եղբայր , ես ի՞նչ ծանրութիւն ունիմ որ կշռուիմ :
- Կշռուիս նէ կը հասկնաս :
- Վաղ անցիր , քեզի աճեմ աշրման եղանակաւ սքանչելի «Ամէն և ընդ հոգւոյդ քում» մը կըսեմ :
- Ես անանկ աճեմ աշրմանէ , քիւրտ գաշըրանէ չեմ հասկնար . նոտէ՛ նայիմ :
- Է հայտէ՛ նստեցանք ըսենք , քաշէ նայիմ :
- (Կշռելով) Հարիւր իննսուսուս :
- Հարիւր իննսուն մի , անօթի՞ փորով :
- Օհ , եթէ ճաշդ ըրած ըլլայիր , անպատճառ 200է աւելի պիտի կշռէիր , ու խանթարս չպիտի քաշեր :
- Բայց անհաւատալի՞ է . . .
- Հիմա հաշիւը տամ նէ կը հաւատաս : 30 քիւս երաժիշտի յատուկ շոքորդութեան ծանրութիւն , 30 քիւս ազգային ճիւղութեան ծանրութիւն , 40 քիւս ծխախոտի ձրիաճարակութեան ծանրութիւն , 20 քիւս կոնծելաբանութեան ծանրութիւն , 20 քիւս տնօրէնին գիտողութիւններուն ականջի կախելով անոր հետ մերթ ընդ մերթ գծաւորութեան ծանրութիւն , և ի լրումն ամենեցուն՝ 50 քիւս ալ եկեղեցական եղանակները ուղած ձեւի թափելներու ծանրութիւն ,

հիմա համոզուեցա՞ր պարոն աճեմ աշրման :

— Եղբայր , ես նորութիւն մը ըլլալու , ժողովուրդի ականջին ախորժելի ընելու համար եղանակները փոխած եմ :

— Ինքնիրենդ ատանկ բաներ չես կրնար ընել . եկեղեցական երգեցողութեան դարաւոր վեհութիւնը աճեմ աշրմանով կամ գաշըրանով այլակերպել չըլլար , կը հասկնամ . հայտէ՛ Ծնոցը տուր ու ճամբադ շարունակէ :

— Ես ազգային ճիւղ եմ , չեմ բռներ .

— Ուրեմն առանց վայրկեան մը կորսնցնելու շուտով ասկէ հեռացիր որ գործերնիս անյաջող չերթայ :

— Ծառութիւն :

— Բարի եկաք : Է ճանըմ , կէ՛լ գանթարա՛ :

— Պարոն Բոժոժիկ , սանկ նայէ , Գերապատիւ ատտանդաշըջիկը դէպի հոս կուգայ :

— Թող հրամայէ :


(Շարունակելի)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պոնճուգեանի պատկերազարդ Գերական — Ընթերցարանը : Դին 60 սանդղիմ . վարժարանաց համար 100ին 15 չեղջ :

Դիմել սա հասցեով

J. G. BONDJOUKIAN VABNA



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԵՒ ՅՈՐԵԿՈՒԹԻԿ

Բ. ՏԱՐԵՇՐՁՈՆ

Կը վերաբացուի սեպտեմբեր 1/13ին :

Ընդունելութեանց պայմաններու և ուրիշ տեղեկութեանց համար դիմել նամակով կամ անձամբ՝ առ

Հիմադիր-Տնօրէն

Հայկական Կրթարանի

Կ Ր Օ Ն Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն

Թէ ազգային թատերախաղեր և
թէ եւրոպական լեզուներէ հայերէնի
թարգմանուած տպեալկամ անտիպ թա-
տերգութիւններու կատակերգութիւն-
ներու պէտք ունեցողները գիմելու են
խմբագրութեանս:

ԱՂԶԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Աղջկանց Կրթարանն իր Դրդ տա-
րեշնջանը կը սկսի յառաջիկայ Սեպտ.
1 | 13ին: Վարժարանը բարձրագոյն նա-
խակրթարանի մը ամեն պահանջուած
պայմաններն ունի. դասերը կաւանդու-
ին մեծ խնամքով: Հայերէն, Փրանսե-
րէն և Պուլկարերէն լեզուները պարտա-
ւորիչ են, իսկ Անգլիերէնը կամաւոր:
Ընդունելութիւնք և մասնաւոր տե-
սակցութիւնք կը կատարուին ամեն օր
ժամը 9—12 (ը. ե.):

Վառնա 4րդ թաղ թիւ 40

Տնօրէնութիւն

Պ. ՃԻՑԵՐՃԵԱՆ

Մ. 2.

ԹՈՒԹՈՎՄՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հա-
տորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա.
Զարպհանէլեանի գրատունը, Վարնա:



Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կառ

Մեղի և Ապաշառ

Պոլսական կեանքէ քաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափաղեան

Դին 60 սանդիմ: Դիմել խմբագրութեան:

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ
ԵՐԱՇԽԱՆՈՐԵԱՅ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած
են, որոնց 25,000ը պիտի շահին հե-
տեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	թիւեր.
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-3նոյ	16,000	"

Պէտք ունեցող.	Մէկ ութերդ.	Գողտրիկ	Կէս	Ամբողջ
	1, 25 ֆ.	2, 50 ֆ.	5 ֆ.	10 ֆ.
	2	4	8	16
	2, 50	5	10	20
	3, 50	7	14	28
	3	6	12	24
	2, 15	4, 30	8, 60	17, 20
	14, 40	28, 80	57, 60	115, 20

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք
է դիմել Սեդանատու Տիար ՍԱՐԳՍԻ ՔԱՐԳԻՍԻ
միակ զգիւտաւոր գործակալ տոյն պիտակահանութեան,
Վառնա, Մուսալլա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:
Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ
Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուղէ, պար-
տաւոր է առջի կարգերուն փոխարէնն
ալ վճարել:

Отговорникъ М. Сконовъ
Печантица Взаимность — "Варна."